ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2026թ. թիվ 278-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 273-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի ապրիլի 27-ի «Թ.Թադևոսյանին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակելու մասին» թիվ 273-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշման նախաբանում «Ղեկավարվելով» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասով,» բառերը.

2) Որոշումը լրացնել նոր՝ 3-րդ կետով.

«3. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարման համար Թ.Թադևոսյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Խլղաթյանի անվան թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

X

2026-04-28 16:40:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԱ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: MKRTCHYAN AREN 1204920311 Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 28
ք.Վանաձոր